ՆԱԽՆԱԿԱՆ ԵՎ ՄԻՋԻՆ ՄԱՄՆԱԳԻՏԱԿԱՆ ՈՒՍՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԻ ԱՏԵՍՏԱՎՈՐՈՒՄ

2024

ԱԳՐՈՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ԹԵՍՏ 2

ԽՄԲԻ ՀԱՄԱՐԸ

ՆՍՏԱՐԱՆԻ ՀԱՄԱՐԸ

Հարգելի՛ ուսուցիչ

Խորհուրդ ենք տալիս առաջադրանքները կատարել ըստ հերթականության: Ուշադիր կարդացե՛ք յուրաքանչյուր առաջադրանք: Եթե չի հաջողվում որևէ առաջադրանքի անմիջապես պատասխանել, ժամանակը խնայելու նպատակով կարող եք դրան անդրադառնալ ավելի ուշ:

Թեստ-գրքույկի էջերի դատարկ մասերը կարող եք օգտագործել սևագրության համար:

1 **Ո՞րն է գործարարության ծրագրի արտադրական բաժնի առանցքային ցուցանիշը:** *(1 միավոր)*

1) կանխատեսվող շահույթը
2) արտադրական կարողությունը
3) կիրառվող ստանդարտները
4) ապրանքի իրացման սխեման

2 **Ո՞րն է կառավարման կազմակերպական կառուցվածքի անբաժանելի մասը:** *(1 միավոր)*

1) համակարգը
2) արարողակարգը
3) կառուցակարգը
4) աստիճանակարգը

3 **Լիազորությունը ռեսուրսների տնօրինման և կարգադրություններ անելու ինչպիսի՞ իրավունք է:** *(1 միավոր)*

1) լիակատար
2) սահմանափակ
3) ամբողջական
4) մասնակի

4 **Կառավարման ինչպիսի՞ գործառույթ է վերահսկողությունը**: *(1 միավոր)*

1) եզրափակիչ
2) հիմքային
3) առաջնային
4) կարգավորիչ

5 **Տրվածներից ո՞րն է ընկած նվազագույն աշխատավարձի սահմանման հիմքում:** *(1 միավոր)*

1) նվազագույն պարենային ընտրությունը
2) նվազագույն սպառողական վարկը
3) նվազագույն սպառողական զամբյուղը
4) նվազագույն պարենային զամբյուղը

6 **Բերվածներից ո՞րը կոնֆլիկտների լուծման միջանձնային եղանակի ոճ չէ:** *(1 միավոր)*

1) համահարթեցումը
2) համագործակցումը
3) սահմանազատումը
4) փոխզիջումը

7 **Քանի՞ մակարդակներով են ներկայացված մարդու պահանջմունքները Աբրահամ Մասլոուի պահանջմունքների դասակարգման տեսության մեջ:** *(1 միավոր)*

1) 14
2) 3
3) 5
4) 11

8 **Տարբերակներից ո՞րը *չի* դասվում նյութական խթանների շարքին՝ ըստ ժամանակակից տեսությունների:** *(1 միավոր)*

1) պարգևը
2) աշխատավարձը
3) մասնակցողականությունը
4) հավելավճարը

9 **Ի՞նչ է անգլերենից թարգմանաբար նշանակում «սթրես» բառը:** *(1 միավոր)*

1) ջղայնություն
2) հոգնածություն
3) հյուծվածություն
4) լարվածություն

10 **Տարբերակներից ո՞րը սթրեսի տարատեսակ *չէ*:** *(1 միավոր)*

1) տեղեկատվական
2) փաստագրական
3) ֆիզիոլոգիական
4) սոցիալական

11 **Բերված տարբերակներից ո՞րը շուկայի հիմնական տարր չէ:** *(1 միավոր)*

1) մրցակցությունը
2) պահանջարկը
3) առաջարկը
4) համագործակցությունը

12 **Ինչի՞դեր է կատարում գինը առաջարկի և պահանջարկի միջև:** *(1 միավոր)*

1) կարգավորիչի
2) խթանիչի
3) բազմապատկիչի
4) փոխարկիչի

13 **Ի՞նչ փոփոխություններով է պայմանավորված կառուցվածքային գործազրկությունը:** *(1 միավոր)*

1) կառավարչական
2) դեմոգրաֆիական
3) կլիմայական
4) տեխնոլոգիական

14 **Տարեկան քանի՞ տոկոսից բարձր տեմպերով են աճում գները գերսղաճի (հիպերինֆլյացիա) դեպքում:** *(1 միավոր)*

1) 70 %-ից
2) 100 %-ից
3) 50 %-ից
4) 10 %-ից

15 **Կարճ ժամանակահատվածում ինչպիսի՞ կապ կա սղաճի և գործազրկության միջև՝ ըստ Ֆիլիպսի կորի:** *(1 միավոր)*

1) փոխադարձ
2) անմիջական
3) աճանցիալ
4) հակադարձ

16 **Այլ կերպ ինչպիսի՞ քաղաքականություն են համարվում սղաճի կարգավորման ուղղակի մեթոդները:** *(1 միավոր)*

1) եկամուտների
2) ներդրումային
3) հարկային
4) ծախսերի

17 **Տրվածներից ո՞րն է մարքեթինգային հետազոտության կիրառական գործիք***: (1 միավոր)*

1) հավաքագրումը
2) մոտարկումը
3) դիտարկումը
4) փաստարկումը

18 **Ինչպիսի՞ գործունեություն է մարքեթինգը՝ ըստ Ֆիլիպ Կոտլերի:** *(1 միավոր)*

1) վարչական
2) սոցիալական
3) տնտեսական
4) գործնական

19 **Ինչպիսի՞ բնույթ ունի վաճառքի խթանումը՝ որպես միջոցառումների համակարգ***: (1 միավոր)*

1) կարճաժամկետ
2) ռազմավարական
3) մարտավարական
4) երկարաժամկետ

20 **Որքա՞ն է փակ բաժնետիրական ընկերության բաժնետերերի՝ օրենքով սահմանված առավելագույն թույլատրելի թիվը:** *(1 միավոր)*

1) 49
2) 36
3) 50
4) 25

21 **Հաշվետվություններից ո՞րը ֆինանսական փաթեթի կազմում *չի* ընդգրկվում:** *(1 միավոր)*

1) դրամական հոսքերը
2) սեփական կապիտալում փոփոխությունները
3) համապարփակ ֆինանսական արդյունքները
4) շրջանառության տեղեկագիրը

22 **Ի՞նչ է հաշվապահական հաշվառման մեթոդը:** *(1 միավոր)*

1) Տնտեսական միջոցների ընթացիկ վերահսկողությունն է:
2) Հաշվապահական հաշվառման օբյեկտների ուսումնասիրության և հետազոտության եղանակների ամբողջությունն է:
3) Երկու խումբ ցուցանիշների՝ տնտեսական միջոցների և դրանց գոյացման աղբյուրների հանրագումարային տվյալների հաշվեկշռային ընդհանրացումն է:
4) Ընթացիկ հաշվապահական տեղեկատվության ընդհանրացումն է:

23 **Ինչպիսի՞ գնաճ է նպատակադրում Կենտրոնական բանկը:** *(1 միավոր)*

1) զսպող
2) հաստատուն
3) լողացող
4) չափավոր

24 **Ո՞ր տարբերակում են ճիշտ նշված համայնքային բյուջեների բաղկացուցիչ մասերի համարները:** *(1 միավոր)*

1. պահուստային, 2. վարչական, 3. ֆինանսական, 4. ֆոնդային

1) 3 և 4
2) 1 և 3
3) 1 և 2
4) 2 և 4

25 **Ո՞ր տարբերակում են ճիշտ նշված ուղղակի հարկերի համարները:** *(1 միավոր)*

1. ճանապարհային, 2. ակցիզային, 3. եկամտային, 4. ավելացված արժեքի

1) 2 և 4
2) 1 և 4
3) 1 և 3
4) 2 և 3

26 **Տրվածներից ո՞րը ֆինանսական ռեսուրս չէ:** *(1 միավոր)*

1) կրեդիտորական պարտքերը
2) սեփական կապիտալը
3) երկարաժամկետ վարկերը
4) հիմնական միջոցները

27 **Հաշվապահական հաշվառման վարման ո՞ր փուլին են հաջորդում տարեվերջյան ճշգրտումները:** *(1 միավոր)*

1) շրջանառության տեղեկագրի կազմման
2) սկզբնական հաշվառման կազմակերպման
3) հաշիվներում գրանցման
4) գրանցամատյանների վարման

28 **Տրվածներից ո՞ր մեթոդով են տնտեսական միջոցները ստանում դրամական արտահայտություն:** *(1 միավոր)*

1) կրկնակի գրանցման
2) գույքագրման
3) փաստաթղթավորման
4) գնահատման

29 **Որպես ի՞նչ են դասակարգվում վաճառքի համար պատրաստված հաստոցները:** *(1 միավոր)*

1) արտադրանք
2) ապրանք
3) նյութեր
4) կապիտալ

30 **Տրվածներից ո՞րը մրցակցության գործառույթ չէ: Նշել դրա համարը:** *(1 միավոր)*

1) հակամենաշնորհային
2) գնագոյացման
3) հաշվեկշռային
4) կարգավորման

31 **Տրվածներից 3-ը հաշվապահական հաշվառման մեթոդի տարրեր *չեն*: Նշել դրանց համարները:** *(3 միավոր)*

1. վերագնահատումը
2. կրկնակի գրանցումը
3. հաշվանցումը
4. փաստաղթավորումը
5. գնահատումը
6. հաշվեգրումը
7. գույքագրումը

32 **Տրվածներից 3-ը հարկային համակարգի սկզբունքներ *չեն*: Նշել դրանց համարները:** *(3 միավոր)*

1. օբյեկտիվությունը
2. համախմբվածությունը
3. թափանցիկությունը
4. գաղտնիությունը
5. պարզությունը
6. անկախությունը
7. հաշվետվողականությունը

33 **Տրվածներից 3-ը հաշվապահական հաշվառման հաշիվների պլանի դասեր *չեն*: Նշել դրանց համարները:** *(3 միավոր)*

1. դեբիտորական պարտքերը
2. սեփական կապիտալը
3. կրեդիտորական պարտքերը
4. ծախսերը
5. փոխառությունները
6. եկամուտները
7. ընթացիկ ակտիվները

34 **Տրվածներից 3-ը առևտրային կազմակերպությունների ռազմավարական պլանավորման գործառույթի իրականացման փուլեր են: Նշել դրանց համարները:** *(3 միավոր)*

1. որոշումների ընդունման սահմանափակումների ու չափանիշների ձևակերպումը
2. առաքելության և նպատակների սահմանումը
3. ստանդարտների մշակումը
4. ներքին միջավայրի իրավիճակային վերլուծությունը
5. փաստացի արդյունքների համեմատումը ստանդարտների հետ
6. ճշգրտող գործողությունների իրականացումը
7. արտաքին միջավայրի գործոնների վերլուծությունը և գնահատումը

35 **Տրվածներից 3-ը գործարարության ծրագրի (բիզնես պլան) բաժիններ են: Նշել դրանց համարները:** *(3 միավոր)*

1. կոնֆլիկտների կառավարումը
2. կառավարման կազմակերպումը և անձնակազմը
3. որակի կառավարումը
4. ներդրումների կառավարումը
5. ռիսկերի կանխատեսումը և կառավարումը
6. ֆինանսական ծրագիրը և ֆինանսական ռազմավարությունը
7. փոփոխությունների կառավարումը

36 **Տրվածներից 3-ը, ըստ կառավարման ժամանակակից գրականության, կառավարման հիմնական կամ ընդհանուր գործառույթներ են: Նշել դրանց համարները:** *(3 միավոր)*

1. լիազորումը
2. պլանավորումը
3. կանխատեսումը
4. կազմակերպումը
5. համակարգումը
6. շահադրդումը
7. պատվիրակումը

37 **Տրվածներից 3-ը փողի գործառույթներ են: Նշել դրանց համարները:** *(3 միավոր)*

1. փոխանցման միջոցի
2. հիմնական միջոցի
3. կուտակման միջոցի
4. վճարման միջոցի
5. շրջանառու միջոցի
6. փոխանակման միջոցի
7. շրջանառության միջոցի

38 **Տրվածներից 3-ը գործազրկության տեսակներ *չեն*: Նշել դրանց համարները:** *(3 միավոր)*

1. փոխանակային
2. ֆրիկցիոն
3. սեզոնային
4. գործառութային
5. տարածաշրջանային
6. համակարգային
7. պարբերաշրջանային

39 **Տրվածներից 3-ը վերջնական սպառողների շուկան *մարքեթինգային տեսանկյունից* հատվածավորելու չափանիշներ են: Նշել այդ տարբերակների համարները:** *(3 միավոր)*

1. հետագծային
2. ժողովրդագրական
3. ազգագրական
4. ժամանակագրական
5. ռազմավարական
6. աշխարհագրական
7. վարքագծային

40 Տրվածներից 3-ը, ըստ *նշանակության դասակարգման*, մարքեթինգային տեղեկատվության (տվյալների) տեսակներ *չեն*: Նշել դրանց համարները: *(3 միավոր)*

1. փաստաթղթային
2. պարբերական
3. վերացական
4. տեղեկատվական
5. հանձնարարական
6. նորմատիվային
7. զգուշացնող